

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ Ընկերության կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին

Աուդիտի գործընթացները, սերտիֆիկատի տրամադրման, մերժման, պահպանման, նորացման, կասեցման, վերականգնման կամ դադարեցման կամ սերտիֆիկացման ոլորտի ընդլայնման կամ կրճատման գործընթացներ, կառավարման համակարգերի տեսակներ և սերտիֆիկացման սխեմաներ

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ Ընկերության կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինը հավատարմագրված է ԻՍՕ 9001 «Որակի կառավարման համակարգեր. Ընդհանուր պահանջներ», ԻՍՕ 14001 «Շրջակա միջավայրի կառավարման համակարգեր. Պահանջներ և կիրառման ուղեցույց», ԻՍՕ 22000 «Մենդամթերքի անվտանգության կառավարման համակարգեր. Մենդամթերքի արտադրության շղթայում ընդգրկված կազմակերպություններին ներկայացվող պահանջներ», FSSC` ԻՍՕ 22000 «Մենդամթերքի անվտանգության կառավարման համակարգ», ԻՍՕ 45001 «Աշխատողի առողջության և աշխատանքի անվտանգության կառավարման համակարգեր. Պահանջներ և կիրառման ուղեցույց» և ԻՍՕ 13485 «Բժշկական սարքեր. Որակի կառավարման համակարգեր. Կանոնակարգման նպատակների համար պահանջներ» միջազգային ստանդարտերին համապատասխան: /տե՛ս հավատարմագրման վկայականը/

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ Ընկերության կառավարման համակարգերի սերտիֆիկացումը ներառում է՝

- ✓ Նախնական աուդիտ,
- ✓ Սերտիֆիկացման հայտի գրանցում
- ✓ Հայտի վերլուծություն
- ✓ Սերտիֆիկացման հայտի վերաբերյալ որոշման ընդունում
- ✓ Աուդիտի ծրագրի մշակում
- ✓ Աուդիտի պլանավորում
- ✓ Կառավարման համակարգերի աուդիտ,
- ✓ Տեղում աուդիտ
- ✓ Աուդիտի հաշվետվության նախապատրաստում,
- ✓ Սերտիֆիկացման վերաբերյալ որոշման ընդունում,
- ✓ Համապատասխանության սերտիֆիկատի ձևակերպում և հանձնում պատվիրատուին,
- ✓ Համապատասխանության սերտիֆիկատի հանձնումից հետո նաև՝ սերտիֆիկացված կառավարման համակարգերի համապատասխանության հսկողության աուդիտի իրականացում:

ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17021-1 «Համապատասխանության գնահատում. Կառավարման համակարգերի աուդիտ և սերտիֆիկացում իրականացնող մարմիններին ներկայացվող պահանջներ» և ՀՍ 5.7 «Համապատասխանության հավաստման համակարգ. Կառավարման համակարգերի սերտիֆիկացում» ստանդարտների պահանջներին համապատասխան

սերտիֆիկացման մարմինը կարող է կասեցնել սերտիֆիկատի գործողության ժամկետը, բայց վեց ամսից ոչ ավելի ժամկետով, հետևյալ դեպքերում.

- համապատասխանության հսկողության ժամանակ էական ռիսկերին առնչվող անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում,

- հայտնաբերված անհամապատասխանությունները երկու ամսվա ընթացքում չվերացնելու դեպքում,

- սպառողներից արտադրանքի և արտադրության անվտանգությանը վերաբերող հիմնավորված բողոքների առկայության դեպքում, որոնք կապված են իրավական և նորմատիվ պահանջների խախտումների հետ,

- համապատասխանության սերտիֆիկատի օգտագործման և համապատասխանության նշանի կիրառման կանոնների խախտման դեպքում,

- համապատասխանության հսկողության գործընթացներից և (կամ) գործընթացների անցկացման համար վճարումից հրաժարվելու դեպքերում: